3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 37-Ա/2 «19» 01 2022

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի № 614-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի մայիսի 5-ի «Միջազգային միջոցառումներին մասնակցելու համար երիտասարդներին ավիատոմսի ծախսի փոխհատուցում տրամադրելու կարգը, միջազգային միջոցառումներին մասնակցելու համար երիտասարդներին ավիատոմսի ծախսի փոխհատուցում ստանալու համար դիմումի, միջազգային միջոցառումներին մասնակցելու արդյունքների մասին հաշվետվության, միջազգային միջոցառումներին մասնակցելու արդյունքների վերաբերյալ եզրակացության և միջազգային միջոցառումներին մասնակցելու համար երիտասարդներին ավիատոմսի ծախսի փոխհատուցում տրամադրելու մասին պայմանագրի ձևերը հաստատելու մասին» № 614-Ա/2 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները:

1) Հրամանի 3-րդ կետում «Գ. Լոռեցյան» բառերը փոխարինել «Ա. Մարտիրոսյան» բառերով.
2) Հավելված 1-ի 12-րդ կետի 1) ենթակետում, Հավելված 1-ի 20-րդ կետում, Հավելված 1-ի 22-րդ կետում «երիտասարդական քաղաքականության» բառերը փոխարինել «երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության» բառերով.
3) Հավելված 1-ի 13-րդ կետում «երիտասարդական քաղաքականության վարչության համագործակցության և վերլուծությունների բաժնի» բառերը փոխարինել «երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության» բառերով.
4) Հավելված 1-ի 12-րդ կետի 6), 7) ենթակետերը հանել.

5) Հավելված 5-ի «քարտուղար Ն. Հարությունյան» բառերը փոխարինել «քարտուղարի» բառով:

ՆԱԽԱՐԱՐ՝ ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Invalid signature

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211